ՉԵՌՆՈԲԻԼԻ ԱՏՈՄԱԿԱՅԱՆԻ ՎԹԱՐԸ

Վթարը տեղի է ունեցել 1986թ. Ուկրաինայի Չեռնոբիլի ատոմակայանի չորրորդ բլոկում: Վթան ինչպես զոհերի թվով, այնպես էլ տնտեսական վնասներով ամենախոշորն է ատոմային վթարների շարքում Պայթյունի հետևանքով ռեակտորն ամբողջովին ավերվել է և շրջակա միջավայր են արտանետվել մեծ քանակությամբ ճառագայթակտիվ նյութեր:

Վթարից հետո առաջին երեք ամսվա ընթացքում մահացել է 31 հոգի, իսկ ճառագայթման հետևանքները, որոնք բացահայտվել են 15 տարիների ընթացքում, դարձել են 60-80 մարդու մահվան պատճառ: 134 մարդ տարբեր աստիճանի ճառագայթային հիվանդություն են ստացել, ավելի քան 115 հազար մարդ տարհանվել է 30 կիլոմետրանոց ճառագայթման գոտուց:

Վթարի հետևանքով ճառագայթահարվել են Ուկրաինայի, Բելոռուսի և Ռուսաստանի դաշնության ընդհանուր թվով 8,4 միլիոն բնակիչներ: Ներկայումս վթարային գոտում մշտական բնակիչներ չեն ապրում, և գործում է անցագրային ռեժիմ: